## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-02/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» փետրվարի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդոյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-02/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված, նիստին ներկա մասնակիցների առաջարկած գներն են.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | | | «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 5 | Թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | 1 275 000 | 255 000 | 1 530 000 | 1 283 333.33 | 256 666.67 | 1 540 000 |

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին:

6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին:

6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. փետրվարի 24-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. փետրվարի 28-ին, ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝ Աղավնի Բուդոյան

Կարեն Մելքոնյան

Կարեն Համբարձումյան

Քարտուղար՝ Էլլադա Արզաքանյան

Արուս Խաչատրյան